

ՄԱՍԻՍ



ՀԱՆԴԵՍ

Ազգային, Գրական եւ Քաղաքական

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՐԵՎ ՇԱՐԱԹՆ ԱՆԳԱՄ ՄԸ

ՏՆՕՐԷՆ ՀՐԱՆՑ ԱՍՍՏՈՒՐ	ԽՄԲԱԳՐԱՊԵՏ ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ
ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ Պոլիս 20 Ղրուշ Գաւառները 25 Օտար երկիրներ 6 Ֆրանք	ՀԱՍՑԷ Ղալաթիա, Կէօզէ Օղլու Խան

ՄԵՐ

ՎԱՆՔԵՐԸ

Գ.

Մասնաւորելով մեր տեսութիւնը Տաճկաստանի հայ վանքերուն, կը դիտենք թէ 1860 էն յետոյ ուղղուած է մեր Կեդրոնական Վարչութեան ուղղակի հսկողութեան տակ դնել զանոնք, և անոնց հոգատարութիւնն յանձնել յատուկ մարմնի մը՝ Վանօրէից Խորհուրդին կազմութեամբ, սակայն այդ Խորհուրդը կազմուած, լուծուած, վերակազմուած է հետըհետէ առանց ո և է գործ մը տեսնելու:

1872 ի Վանօրէից Խորհուրդը, որ առաջինն եղած է Սահմանադրութեան հաստատութենէն յետոյ, պատրաստած է Սահմանադրական Հրա-

հանգ մը, Ազգային Վարչութենէն վաւերացուած. ըստ այդ Հրահանգին, որուն գործադրութիւնը գրեթէ ամեն կողմ գծարութիւններու ընդհարած է, վանքերն իրենց Ընդհանուր ժողովով, Տնօրէն Խորհրդով, Վանահայրով բոլորովին անկախ են Վիճակէն և պէտք է համար տան Ազգային Վարչութեան միայն: 12 ի Խորհուրդը հետզհետէ երեք շրջաբերականներ ալ կը ղրկէ վանքերուն, պահաջելով անոնց վիճակագրութիւններն ու հաշիւները. քիչեր վիճակագրական տեղեկութիւններ կը հաղորդեն և անոնցմէ երկուսը չեն կը յղեն իրենց հաշիւները:

Այնուհետեւ կազմուած Վանօրէից Խորհուրդները այդչափ արդիւնք ալ չեն կրցած ձեռք բերել: Իրաւ է որ շատ մը վիճաբանութիւններ ըրած, ծրագիրներ շինած են: Նիստեր յատկացուած են լուծելու համար սա ամենակարեւոր խնդիրները թէ... վանքերը նախ ո՞ր ծագում առած են,

Թէ ի՞նչ են միաբանութիւններու կազմութեան պատճառները, Թէ ե՞րբ հիմնուած են առաջին հայ վանքերը. սակայն չ'են կրցած ու եւ ազդու միջոց ձեռք առնուլ վանքերու բարեկարգութեան համար, չ'են յաջողած անոնց մատակարարութիւնը բարելոքել, անոնց հաշիւները բերել և քննել, անոնց վիճակագրութիւնները պատրաստել տալ, և այսօր Պատրիարքարանն իսկ չ'ունի հայ վանքերու կատարեալ վիճակագիր մը:

* * *

Վանքերը վիճակներէ բոլորովին անկախ նկատելով, 1872 ի Սահմանադրական Հրահանգը մեծ սխալ մը գործած է: Կեդրոնը միայն համարառու ըլլալով վանքերուն, վիճակին Առաջնորդն ա՛լ չի կրցաւ մօտէն հսկել անոնց վրայ, և վանահայրները, միաբանները, աշխարհական հոգաբարձուները իրենք զիրենք ազատ նշկատեցին իրենց ըմբռնած եղանակին համեմատ մատակարարելու զանոնք, առանց ու եւ մէկուն հաշիւ տալու, իրենցմէ վեր չ'ընդունելով ու եւ հեղինակութիւն. առաջնորդներն ալ անտարբեր մնացին, և մենք տեսանք վարդապետներ, որոնք նոյն իսկ չը կրցան ըսել մեզ որոշ կերպով Թէ քանի՞ վանք կայ այն գաւառին մէջ զոր հովուած էին:

Պէտք է կարծել Թէ այս կեդրոնացման դրութիւնը բացարձակ կերպով ընդունուած է մեր օրէնքէն. Սահմանադրութիւնը կ'ենթադրէ Թէ առաջնորդները կրնան միանգամայն վանահայր ըլլալ և վանահայրերն ալ առաջնորդ. ուրեմն Սահմանադրութեան հակառակ չ'է վիճակի մը վանքերը նոյն վիճակի Առաջնորդին իրաւասութեան ենթարկել: Սրբազան Պատրիարքը, իր վիճակի և վանքերէ քաղաքացիական ծառայողներէ մէջ, կը գրէ. «Ապակեդրոնացման սկզբունքին, որ սահմանադրական է և ասկէց առաջ ազգային ալ է, կատարելապէս հաւատարիմ մնալու համար՝ վանքերը Թեմական եպիսկոպոսի իրաւասութեան և վերատեսչութեան ներքեւ պէտք է լինին»:

Ապակեդրոնացման սկզբունքը գործադրելով պիտի կրնանք Թերեւս վանքերու ողորմելի կացութեան դարման մը գտնել: Ամեն վիճակի վանքերը պէտք է ամբողջութիւն մը կազմեն, կրօնական և աշխարհական ձեռնհաս անդամներէ կազմուած Կեդրոնական Տնօրէն Ժողովի մը խնամատարութեամբ, որուն գլուխը գտնուելու է վիճակին Առաջնորդը: Այս կերպով, Առաջնորդն անմիջական հսկողութիւն պիտի կրնայ կատարել վանքերուն վրայ: Այս դրութիւնն արդէն կը գործադրուի քանի մը գաւառներու մէջ և շատ օգտակար եղած է: Օրինակի համար, եթէ չ'ենք սխալիր, Կարինի վանքերը մէկ Հոգաբարձութեան խնամքին տակ կը կառավարուին, Առաջնորդին նախագահութեամբ, և այդ վանքերուն հասոյթները մեծապէս օգտակար կ'ըլլան հանրային կրթութեան:

Սակայն գաւառներու ամենաստուար մասին մէջ Առաջնորդը բոլորովին օտար է վանքերուն: Օրինակ կուզէք: — Տեսէ՛ք Բաղէշը: Հինգ վանքեր ունինք այդ վիճակին մէջ: Գիտէ՞ք ով են այդ վանքերուն համարառուները. պարզ անհատներ: Քաղքին գլխաւոր հարուստները մէկ

Սակայն գաւառներու ամենաստուար մասին մէջ Առաջնորդը բոլորովին օտար է վանքերուն: Օրինակ կուզէք: — Տեսէ՛ք Բաղէշը: Հինգ վանքեր ունինք այդ վիճակին մէջ: Գիտէ՞ք ով են այդ վանքերուն համարառուները. պարզ անհատներ: Քաղքին գլխաւոր հարուստները մէկ

մէկ վանքի հոգաբարձու են . իրենք կը վարեն ամեն բան, եկամուտներուն ու ծախքերուն բացարձակ հրամայողներն իրենք են : Վա՛յ Առաջնորդին, եթէ միջամտել ուզէ՝ — Տեսէ՛ք Խարբերդը, Եւգոկիան : Այս վերջին Վիճակին մէջ Պատրիարքական Տեղապահը վերջերս վանք մը կերթայ . աշխարհական հոգաբարձուները փառաւոր ընդունելութիւն կ'ընեն անոր , ոչխարներ կը մորթուին , սեղան կը տրուի : Երկու օր յետոյ , և ոչ իսկ ուտելու հաց կուտան Առաջնորդին , որ վանքէն կը մեկնի . իբր հիւր պատուեր էին զայն , որպէս զի ետքն ալ կարենան ճամբել . Առաջնորդը օտարական մըն էր վանքին համար , պարզ օտարական մը որ իրաւունք չ'ունի միջամտել վանքին գործերուն . Ի՞նչպէս կուզէք որ այս պայմաններու մէջ հաշիւ պահանջէր և ուղղութիւն տար վանքին մատակարարութեան :

Ազգային վարչութիւնը յատուկ շրջաբերականով պէտք է տայ առաջնորդներուն այն հեղինակութիւնը որ հիմայ կը պակսի իրենց . պէտք է մանաւանդ վերջ տրուի աշխարհական հոգաբարձութիւններու քմայքին , որք վանքերը կը նկատեն իբր իրենց անվիճելի սեփականութիւնը :

* * *

Այդ հեղինակութիւնն ստանալով , առաջնորդները պիտի կրնան ձեռք առնուլ վանքերու բարեկարգութեան գործը : Վիճակին վանքերէն մին պիտի կրնայ յատկացուիլ գիշերօթիկ կամ ցերեկեայ վարժարանի մը , ուր պատրաստուին վարժապետներ և վարդապետներ . որչափ կարելի է , քաղքին մօտաւորագոյն վանքին մէջ բացուելու

է այդ վարժարանը , որպէս զի Առաջնորդը կարենայ մօտէն հսկել անոր վրայ , ինչպէս Սեբաստիա և Կեսարիա կ'ըլլայ արդէն : Փափաքելի է նաեւ որ այդ վանքին մէջ կեդրոնանան Վիճակին միւս վանքերը գտնուած ձեռագրերն ու հնութիւնները , որք հետըզհետէ կը փոտին , կը կորսուին , կը գողցուին , և օր մը բոլորովին պիտի ոչնչանան . մեր խօսքը մասունքներուն կամ նուիրական նկատուած կրօնական մատեաններուն վրայ չէ որք վանքի մը պատմական սրբութիւնները կը կազմեն և որոնց ուխտի կ'երթայ ժողովուրդը : Ադոնք պէտք է մնան իրենց տեղերը : Գիտենք որ Ներսէս Ե. Կաթողիկոս պատճառ եղաւ Կովկասի շատ հայ վանքերու լքման , էջմիածին փոխադրելով Գրիստոսի պատկերը , Ս. Գեղարդը , Ս. Յակոբի աջը , Գետարգելի Ս. Նշանը և ուրիշ մասունքներ , որոնք յատուկ վանքերու գոյութիւնը կ'ապահովէին :

Վիճակին բոլոր վանքերու հսկողութիւնն յանձնելով Առաջնորդին , չ'է՞ք կարծեր որ անոնց մատակարարութեան մէջ ալ բարւոքում մտցնելու միջոց մը ձեռք առնուած ըլլայ : Առաջնորդներն ի հարկէ աւելի զարգացած ու գործունեայ են քան վանահայրերը և միաբանները , որոնք յաճախ չորս պատի մէջ աղօթել միայն գիտեն , զուրկ վարչական կարողութիւններէ : Առաջնորդները պիտի կրնան քննել և որոշել թէ վանքերը ո՞րչափ կալուած ունին , պիտի փութան Խա՛ն չ'եղած հողերուն համար կարելորդ պաշտօնական գործողութիւնները կատարել և կալուածագիր հայթայթել . կորսուած կալուածագրերը տեղ ուրիշներ հանել տալ . յան-

գավանքերուն հոգերը մշակել տալ և արդիւնաւորել. վանքերու վերաբերող և ասոր անոր ձեռքը գտնուող կալուածներն աղատել. նորոգել ի հարկին ա՛յն սրբավայրերն ուր նուիրական յիշատակներ կամ ոսկորներ կը մնան պահուած, ինչպէս ըրաւ վերջերս Աղթամարայ խաչատուր Կաթողիկոսը քանի մը վանքերու համար :

Կարելի է առարկեն սակայն թէ գաւառաց մէջ պիտի գտնուին վանականներ և վանքերու հոգաբարձութիւններ, որք չ'ուզեն համակերպիլ Ազգային Վարչութեան տնօրինութեան և Առաջնորդին իրաւասութեան եւ թարկուիլ : Այդ հաւանականութիւնը մենք ալ կը նախատեսենք և կը կարծենք թէ Պատրիարքարանը կրնայ բարձրաստիճան եկեղեցականի մը պաշտօն յանձնել որ երթայ այցելէ այդ վանքերն, և Կեդրոնական Վարչութեան որոշման գործադրութիւնը կատարել տայ օրինական միջոցներով :

Գալով Վանօրէից Խորհուրդին, անոր պաշտօնը պիտի ըլլայ ուղղակի յարաբերութեան մօտեւ առաջնորդներուն հետ, բերել տալ ըստ վանքերու վիճակագրութիւններն ու հաշիւները, և վանքերու վերին հսկողութիւնը կատարել :

Ահա այն եզրակացութիւնը որուն եկանք յանգեցանք վանքերու մասին մեր ըրած հետազոտութիւններէն ետքը :

Կը սպասենք որ ազգային իշխանութիւնը հարկ եղած միջոցները ձեռք առնու այս սկզբունքին կիրառումն ապահովելու համար . հակառակ պարագայի մէջ, քիչ ատենէն այդ կրօնական հաստատութիւններու շատերը պիտի անհետանան, իրենց հետ անհետացնելով ոչ միայն հարա-

տութեան առատ աղբիւրներ, այլ և կրօնական թանկագին յիշատակներ, որոնք մեր ժողովրդեան հաւատքին սնունդ հայթայթած և անոր կրօնասէր հոգին տաքցուցած են դարերէ ի վեր :

ՀՐԱՆՏ ԱՍԱՏՈՒՐ

ՄԵՌԱԾ ԳՐԱԳԷՏՆԵՐ

Եթէ «սկսիլը գործին կէսն է», ինչպէս կըսէ հին առած մը, Դուրեանի գործերը կիսովին հրատարակուած կրնան համարուիլ Առաջին երկու ֆօրմաները տեսանք արդէն . ութածալ փոքրիկ սիրուն տետրակներ, որք կը պարունակեն քսան երկու ոտանաւորներ, թուականի կարգաւ, 1867 էն 1871 : Միւս ֆօրմաները մամուլը ներքեւ են : Նոր սերունդին համար այս երկրորդ տպագրութիւն պիտի ունենայ անշուշտ այն յուզիչ շահեկանութիւն զոր առաջին տպագրութիւնն ունեցաւ 1871 ի երիտասարդութեան համար որ լափեց Տաղ և Թապեր-գոմէշէն : Շատեր, այդ թուականէն ի վեր, տակաւին իրենց յիշողութեան մէջ կենդանի պահած են անոր գեղեցկագոյն հատուածները, «Լճակը», օրինակի համար, կամ այն մելամաղձիկ ոտանաւորը որուն վերնագիրը եռասուղի մը փոխուած է հիմակ, եւ մանաւանդ բանաստեղծին մահամերձ հառաջանքները : Բայց նոր թէ հին սերունդ, ամեն բանասէր հետաքրքիր է կարգալուստիպ քերթուածները, որք ի յայտ պիտի բերեն բանաստեղծին կենաց այս կամ այն կողմը, թաքուն մէկ զգացումը, զսպուած մէկ հառաջանքը, թաղուած սիրոյ մը արձագանգը : Եւ մանաւանդ յառաջաքանը որ պիտի պատկերէ անշուշտ Դուրեանի կեանքը : Այդ յառաջաքանէն շատ բան կ'սպասենք : Հրատարակիլը, Բարսեղ Էնքսէրճեան, որ անվատ գործունէութեամբ մը ձեռնարկեց այս գործին, այնքան տեղեկութիւն հաւաքած է ողբացեալ քերթողի կեանքին վրայ, որ այլ եւս գրչի աշխատութիւն մը միայն կը մնայ իրեն՝ գրական այդ գեղեցիկ պաշարն երեւան հանելու համար : Բայց

մինչեւ այս կէտին հասնելու համար, ինչ տաժանելի աշխատութիւններ քաջեց այդ հէգ դաստիարակը, որ իր ընտանեկան հոգեբերովն բեռնաւորեալ ու դասերովն զբաղած, ժամանակ կը գտնէր Դուրեանը կենդանացընելու: Բաւական չէ՛ր իրեն՝ Պոլսոյ չորս անկիւնները վազել, բանաստեղծին մոռցուած մէկ բարեկամը, դպրոցական մէկ ընկերը գտնելու համար, ուսկից կարենար ձեռագիր ո՞ր ձեռք անցունել, եւ ահա Դուրեան մը «ստեղծելու» հարկին մէջ գտնուեցաւ, — «ստեղծել»՝ բառին նկարչական իմաստովը: Խեղճ Պետրոսը՝ անողոր հիւանդութեան մը դէմ մաքառած պահուն, կրնա՞ր մտքէն անցունել թէ տասը, քսան տարի ետքը, իրեն տարեկից երիտասարդներ, անձկանօք պիտի ըզման իր լուսանրկարն, իր կենդանագիրը տեսնելու. եւ յետոյ, որքան ալ յուսահատ, կը կարծէ՛ր թէ պիտի մեռնի: Այնքան անո՞յ է կեանքը որ թէեւ ծիւրած, սպառած ըլլանք, թէեւ կարծենք ընդհանարել մահուան քառուերը, միշտ սրտերնուս խորը թաքուն յոյս մը, հաւատք մը կուենանք, ապրելու: Եւ երիտասարդ մը, բանաստեղծ մը մանաւանդ աւելի խորունկ կերպով չո՞ւնենար այս յոյսը:

Ամերիկացի հրատարակչի մը արժանի եզակի գաղափար մը յղացաւ էնքսէրճեան: Նկարիչ մը առաւ իր հետ, ու սկսաւ մօտենալ ամէն անոնց որոց դէմքին այս կամ այն մասը բնական նմանութիւն մը ունէր Դուրեանի դիմագծերուն հետ: Ճակատը աշխարհական եղբորմէն փոխ առաւ, աչքերը՝ դասընկերէ՛ մը, չրթունքն ազգականէ՛ մը, մաղերն՝ ուրիշէ՛ մը, «եւ արար մարդ ըստ պատկերի Դուրեանի»: Յետոյ ուրուագիծը ցոյց տուին բանաստեղծին մօրը, եղբարցը, եւ ամեն անոնց որք սերտիւ ճանչցած էին զայն, բարեփոխեցին, սրբագրեցին, ու խղճի հանդարտութեամբ յանձնեցին վիմագրիչին: Այլեւս վստահ կրնանք ըլլալ թէ ճշմարիտ Դուրեան մը պիտի տեսնենք գրքին ճակատը:

Չեմ գիտեր թէ նոր հատորին մէջ հրատարակուած պիտի գտնե՞նք սա անտիպ փոքրիկ ոտանաւորը, որ՝ զուրկ գրական արժանիքէ ու տաղաչափական կանոններէ՝ դարձեալ ակորժով կրնայ կարդացուիլ ա-

նոր համար որ Դուրեանին կը պատկանի: Իզուր է վերացական կարծուած բաներու դէմ քանի մը հրապարակագիրներու կողմէ մղուած պայքարն ու դրական բաներու ծայրայեղ ջատագովութիւնը. բանաստեղծները կը մնան միշտ բանաստեղծ եւ կուենան իրենց համակրողներն եթէ ոչ պաշտողներն, ինչպէս կրնան կը մնան միշտ փափուկ էակներ, իրենց թերութիւններովն, իրենց քննադատելի կողմերովն դարձեալ պաշտելի: Մի՛ պահանջէք որ՝ կին մը չի քահանայ. այն օրը որ ձեր խրատը մտիկ ընող տկար էակ մը գտնուի, — եւ ապահով եղիք որ՝ չի պիտի գտնուի, — վասն զի կանանց դէմ այդ գրուածներն իսկ տեսակ մը բանբասանք չե՞ն, գրական բամբասանք, կամ աւելի ճիշդը՝ լրագրական բանբասանք, — այն օրը որ կին մը համար մնայ ընտանեկան երեկոյթի մը մէջ, երբ մտերիմ մը, մեղմիւ ժպտելով, կը հարցնէ իրեն, «Ինչ լուր ունիք, տիկին», կամ այն օրը որ չորս հինգ օրիորդներ, միեւնոյն զապանակէ մղուածի պէս դադրեցնեն իրենց սիրուն շաղակրատութիւնը, արձանացեալ իրարու երես նայելով, ու արհեստագործութեան գիրք մը փնտռեն, կոճակաշինութիւն, բանջարեղէնի պատրաստութիւն, վերջապէս զրամ հայթայթելու ծառայող արհեստներ: սորվելու համար, այն օրը պիտի դադրին շնորհալի ըլլալէ: Եւ էրիկ մարդուն համար հազար անգամ նախամեծար է որ իր կինը, նշանածը, աղջիկը կամ քոյրը՝ զուրկ ըլլայ մասնաւոր արհեստ մը գիտնալէ, օրական հացը ճարելու գործը «գօրաւ որ սեռին» թողու, եւ ինք ընտանեկան հոգեբով միայն զբաղի, ու պահէ քիչ մը իր կանացի սիրունութիւնը, շնորհն ու փափկութիւնը:

Մեր շուրջն այնքան հազարներով կը համրուին անգործ, անարհեստ մարդեր, երիտասարդներ, որ աւելի իրական ծառայութիւն մը մատուցած կ'ըլլանք հանրութեան՝ միջոց մը ցոյց տալով թէ այդ եղկելիներն ի՞նչ ընեն, ինչի՞ գործածեն աշխատելու տրամադիր իրենց բազուկներն, իրենց առողջ մտքերը, — երբ գործ չիկայ, — քան հայ գեղեցիկ սեռի կեանքին մէջ յեղաշրջում մը յառաջ բերելու միջոցներ ցոյց տալով:

Դուրեան,— որուն յիշատակին ի յարգանս չեմ ուզեր աւելի առաջ տանիլ նիւթէ շեղումս,— շոգենաւին մէջ, ափ յափոյ գրած է այս ոտանաւորը, անծանօթ գեղունայ մը հանդէպ՝ որուն տեսքը մազնիսացուցած էր զինքը։ Երկչոտ երիտասարդն որ «հիմակուան» ներուն յանդգնութիւնը չունէր, ձեռնոց մը կամ հողմահար մը գետնէն վեր վերցունելու կամ աթոռն հրամցընելու պատրուակաւ՝ հին բարեկամի մը պէս խօսակցելու համար անծանօթ կնոջ մը հետ, կուզէ սրտին թելերովը խօսիլ անոր հետ, թուղթ ու գրիչ կը հանէ գրպանէն, եւ կ'սկսի քերթել։ Չե՞նք տեսած նկարիչներ, որք նոյն բանը կընեն շոգենաւին կամ շոգեկառքին մէջ, իրենց քառնէի մէկ թերթին վրայ ուրուագծելով գեղանի գրացուհւոյ մը դէմքն, ու յետոյ իրեն նուիրելով զայն։ Մեր բանաստեղծը սակայն չկրնար արժանանալ մատուցման վայելքին, որ այնքան անակնկալներ կը պարգեւէ արուեստագետներուն, բանաստեղծներուն։ Դեռ ոտանաւորը չաւարտած, շոգենաւը նաւամատոյց հասած էր, ու մինչ ինք գլխահակ վերջին յանգերը կը փնտռէր, անծանօթ գեղունին՝ տգեղներու բազմութեան մէջ աներևոյթ եղած ու դուրս ելած էր արդէն։ Լաւագոյն է խօսքը իրեն թողուլ։

Աչնան մէջ էր, էրեկոյ մը՝
վերադարձին յիւսկիւտար,
Օդը պարզ էր, հողմը մեղմիկ,
Խովուն ջուրերն ալ հանգարտիկ։

Շոգենաւին սարաւանդը
Նստած անկիւն մ'առանձնակի,
Ուշադրութեամբ ես նոյն օրուան
Լրագիրները կարդայի։

Մէկ մ'ալ յանկարծ սանդուխէն
վեր ելնելու ոտնաձայն մը
Շփոթեց զիս, եւ աչերըս
Դարձուցի գէպ պին կողմը։

Հայունհի մ'էր վեր ելնողն,
Բարձրահասակ ու գեղադէմ,
Անցաւ մօտէս նա սիգաճեմ,
Նըստաւ անկիւն մ'ինձ դէմ առ գէմ։

Ո՛հ, կարծես թէ նա երկնային
Զուարթուն մ'էր վար իջած
Լոյս սփռելու, սէր բուրելու,
Խռովելու սրտերն այրած։

Այլ չը գիտեմ թէ ինչու
Կրկին աչերս յառած

Իմ թերթերուն վրայ. միշտ՝
Սիրտս էր ամբողջ խռոված։

Մինչև մէկ մ'ալ նաւաստին
Խռպոտ ձայնով մը գալով մօտ,
Ըսաւ. «Հասանք յիւսկիւտար,
«Ալ ի՞նչ նստեր ես դու հոգ»։

վեր վերցուցի աչերս,
Ոչ զոք տեսի մէջ նաւին.
Մինակ էինք երկուքնիս,
Մէկ մ'ես, մէկ մ'ալ... նաւաստին։

* * *

Դուրեանէն յետոյ, ուրիշ նշանաւոր գրագէտի մը, մեծանուն մեռելի մը գործոց հրատարակման ձեռնարկած է էնքսէր-ձեան, գաւառացի դաստիարակի մը՝ Միքայէլ Կազմարարեանին հետ։ Արձակուրդի տաք օրերուն մէջ, երբ դաստիարակներն հանգիստ կը վայելեն Վոսփորի գեղազուարճ վայրերը շրջելով... կամ ուսուցչական ժողովին մէջ ձառախօսելով, այս երկու համետ ու ժիր վարժապետները կը տեսնէի գրեթէ ամեն օր Ալեքսի խմբագրատան մէջ, ուր Մաֆա օրաթերթի ստուար հաւաքածոյները կը թղթատէին, ընդօրինակելով կամ նօթեր առնելով։ Հետաքրքիր եղայ գիտնալու թէ ի՞նչ կ'ընէին, եւ սրտայոյզ գուգաղիպութեամբ մը կարդացի սա նամակը զոր այդպահուն կ'ընդօրինակէին Մաֆի 1872 Մայիս 7ի թիւէն։

«Հայ երիտասարդ մը ձեր թերթին մէջ «կ'առաջարկէ ստորագրութիւն մը բանալ «Միաքեանի գրաւոր աշխատութիւնքն «ի լոյս ընծայելու համար։ Կ'ուզեմ առաւ-«ջին քաջալերողն ըլլալ այդպիսի մտածու-«թեան մը։ Երեսուն օսմ. ոսկի զրկեցի Ս. «Պատրիարքին որուն պաշտպանութեանը «ներքեւ կը փափաքիմ որ դրվի այդ ա-«ռաջարկեալ ստորագրութիւնը. զի ո՞վ «ի մեզ քան զՊատրիարքն աւելի արժա-«նաւոր է այսպիսի գործի մը պաշտպան «կանգնելու։ Դիչ է այս նուէրը սրտիս ե-«ռանդին համեմատութեամբ, այլ շատ է «իմ կարողութեանս համար. թող իւրա-«քանչիւր ոք նպատէ նոյն չափով։ — «Գիրք տպելը դպրոց բանալ կ'արժէ, եւ «Ազգին ամենէն աւելի երկու բան պէտք «է. զիրք տպել եւ դպրոց բանալ։ Մեր «մէջ հարուստները ձեռնթափ եղած են «այսպիսի գործերէ. թող երեստասարդները

«ձեռնարկէն ու լաւ եւս ընեն ինչ որ եր-
«բեմն հարուստները կընէին :

« 16 Մայիս 1872 »

Այս տողերը գրող մեծ անձնաւորութիւն-
նը կը նախազգա՞ր արդեօք թէ քսան տա-
րի ետքը, նոյն բանը ըսել պիտի պատշա-
ճէր իր գործոց հրատարակման համար, ինչ
որ ինք կըսէր Միսաքեանին գործոց հրատա-
րակման ձեռնարկութեան առթիւ, թէ օ-
րին մէկը, երկու աղքատ երիտասարդներ,
առանց պաշտպանի, առանց նիւթական օ-
ժանդակութեան պիտի ձեռնարկէին իր իսկ
գործոց հրատարակման, ցերեկը տպարանէ
տպարան վազելով, ու գիշերն՝ աղքատիկ
տան մը սեղանին վրայ ժամերով ի գիր
առնելով իր գրական կեանքն ու գործերը :
Օ՛հ, իր մեծ հոգին չպիտի խռովի բնաւ եր-
կինքէն ու իր վսեմ ճակատը չպիտի խոր-
շոմի գերեզմանին խորէն, եթէ մեր հա-
րուստները գործով ցոյց տալ ուղեն թէ ի-
րենք « ձեռնթափ չեն եղած այսպիսի գոր-
ծերէ » ու պաշտպան կանգնին գրքերու հը-
րատարակման : Ընդհակառակն պիտի հըր-
ճուի :

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԾԱՆՕԹ ԴԵՄՔԵՐ

ՍԻՊԻԼ

Սիպիլ, ինչո՞ւ այս պատրուակը. նե-
րելի չ'է՞ անուննիդ տալ. եւ ինչպէ՞ս ծա-
նօթներու կարգը դասել այս դէմքը, որ
անծանօթ մնալ կը փափաքի :

Անծանօթ մնալ ամենուս փափաքն է .
մեզի յատուկ, առանձին, անձեռնմխելի
գոյութիւն մ'ունենալ ուր քաշուինք ուզած
ատեննիս. ծպտում մը որով կարելի ըլլայ
թաքնիլ դժնէհայեաց աչքերէ. օղանան
գործիք մը, որով պարապութիւն չ'ենենք
մեր շուրջը ու պօսպօսող բերաններու կեղ-
ծաւոր ձայնը չի հասնի մեզի :

Ինչ օգուտ. ճամբուն ամբողջ երկա-
րութեամբը բուսած փուշերուն ու մացառնե-
րուն մէջ, ամէն մէկ քայլափոխին ծուրիկ

ծուրիկ կը բղքաի վերարկուն՝ որ անհարկի
աչքերէ պիտի պահէր մարդուն ներքին ու
թաքուն կեանքը :

Սրտին յետին խորշիկը պէտք է պար-
զել ու բան մը չունենալ ու չի պահել քե-
զի յատուկ . ալ այսուհետեւ ո'չ եւս
մասնակի գոյութիւններ, այլ ընդհանուր
կեանք մը. ո'չ ցօղի կաթիլ մը՝ գիշերէն
մնացած թրթռացող տերեւին վրայ . եւ
ոչ կաթիլ մը արցունք արտեւանունքին
վրայ դողահար. ո'չ գետ, ո'չ լիճ եւ ոչ ծով.
այլ ովկէանը միայն. բոլոր ցամաքը մէկ-
զին ու բոլոր ջուրը միւսը. այս է նոր աշ-
խարհագրութիւնը :

* * *

Կը մեղանչեմ հարկաւ եթէ անգաղտ-
նապահ ձեռքով վեր առնեմ այն քօղը որուն
ետին Սիպիլ ճաճկուած կ'ուզէ մնալ. այդ-
պէս թո՛ղ ըլլայ. բայց ներքի է գէթ ու-
րուագրել իր պատկերը այնքան՝ որքան չղար-
չին թափանձկութենէն կը մասնուի կամ լա-
չակին գեղայարգար ու արուեստաչէն ծալ-
քերուն մէջ մոռցուած բացուածքէն կ'ընդ-
նշմարեմ :

Վիպասա՞ն թէ բանաստեղծ :

• Գրող մը որ հոգիին հետ կ'զբաղի, երբեք
մարմնինն. ու կը վախճամ ըսելու, որ սիր-
տը վեր կը դասէ միտքէն, եւ ստուերի մը
տարտամ մթութիւնը՝ որոջ գծի մը յստակ
ու անխարդախ սեւութենէն :

Բանաստեղծ մը ուրեմն :

Բանաստեղծ մը որ շնորհալին՝ գեղեցի-
կէն կը նախընտրէ ու տպաւորութիւնը՝ յի-
շատակէն :

Ինքն ալ տպաւորութիւններ թողուլ կ'ու-
զէ եւ ոչ յիշատակներ. իր եղանակները այն
բերնուց սորվուելիք ու յեղյեղուելիք եր-
գերը չեն զորս ամբողջ միտքը կը պահէ .
այլ ներդաշնակութիւն մը որ մտքի օրօ-
րումով ու ծփանքով, յանգագայ կը տանի
քեզի մենչեւ այն հանգրուանները ուր վա-
յելքը տրտմութեան կը փոխուի. եւ ամեն
անգամ որ կեանքի պատահումներով մօտե-
նաս այդ սահմաններէն մէկուն, այդ ներ-
դաշնակութեան վայելքը կարթնայ յանկարծ
սրտիդ մէջ, թէեւ անկարող ըլլաս զայն յօ-
րինող նուագները վերջիշելու :

իր վէպերը՝ քերթուածներ են:

Աղջկան մը «Երբ անրիծ տատարակի մը սիրտն է, որ դուն ուրեք մեր տանեաց վրայ բոյն կը դնէ. ի՞նչ երեւակայած երիտասարդի հոգին ալ հրեշտակի եւ ճիւղի հոգիներու մէջ կը տարուբերի, ճօճանակի մը պէս որ գծած աղեղին մէկ ծայրէն միւսը կերթայ շարունակ ու չի կենար հոն՝ ուր պէտք է վերջապէս կանգ առնել եւ ուր մարդկային հոգիները սովորաբար կը կենան:

Պատճառն այն է որ քերթող մէջ վիպասանը ու իր մտքին թռիչովը ու աշխոյժովը կ'ոգեւորէ վէպին անձինքը այնքան՝ որ կը դադրին մեզի նմանելէ, անճանաչ էակներ կըլլան որոց ուրախութեան ու կսկիծին անտարբեր կը մնան:

Ի փոխարէն, իր քերթուածներն ալ վէպեր են ուր սրտի անկեղծութենէն ճշմարիտ բանաստեղծութիւնը կը բղխի:

Վասնքի մէջ մոռցուած միանձնուհին՝ իր չնչին բաժինը պահանջելով կեանքէն, արդար բողոք մը կը բերէ ու կը յուզէ մեզի: Իր ժանեակներու սիրուն մեռնող պերճասէր աղջիկը մեր արդի Օֆելիան է, վասնզի յորմէ հետէ աղջիկները չեն մեռնիր ծաղիկ քաղելով, իրենց արդու զարդին համար կըսպառին:

Եւ եթէ այս բանաստեղծութիւնը անկեղծ ցաւակցութիւն մը կարծեսցնէ մեր սրտին մէջ պատճառն այն է որ քերթողը վիպասան մէջ հոս:

Այս քերթողի ու վիպասանի գիրկընդխառնումը գեղեցիկ մազերու մէջ գետնը ուած ծաղիկի մը տպաւորութիւնը կընէ վըրաս:

* *

Իբրեւ վիպագիր՝ հաւատք ունի ամեն բանի վրայ. աղով՝ իր իմաստասիրութիւնը կամրապնդի երբ մերը՝ ինքնագլուխ քաղելու դատապարտուած, կը տկարանայ, կը սայթաքի ամեն վայրկեան:

Իր շեշտը անկեղծութեան շեշտն է նոյն իսկ հոն՝ ուր գերազանցը գտնելու ջանքով կը վրիպի. իր գծած պատկերները անտարակոյս կապրին իր սրտին մէջ եւ ինքը կզգայ, կը տեսնէ զանոնք. իր հոգին՝ թան-

գարան մըն է ուր գլուխ գործոցներ մուտք ունին միայն եւ որոց հետ կապրի օրն ի բուն, գլուխ գլխի, կատարելութեան հրաշակերտներ՝ որոնք ամենօրեայ դրացիներու վերջնական հանգամանքը առած են իր աչքին:

Եւ երբ կը հաճի կեանքը բացատրել այդ էակներու կեանքով, կզմայլեցնէ բայց չի համոզեր զմեզ. իր ըմբռնումը, շքեղ, խստապահանջ, բայց եթէ կարելի է ըսել, անձով կը թռի:

Գեղջուկներ ենք մենք որ կը պահանջենք իրմէ, ապարանքի տիրուհիէն, լայն ու հարթ պողոտայի վրայ քալելու վարժուած տիկիներէն, նեղ ու ցեխոտ փողոցներուն, խարխուլ տուններուն, ծուռ ու մուռ սանդուխներու վրայ ապրողներուն գոյութիւնը չո՛ւրանալ ու չ'արհամարհել. ու երբ ոտքերնին սահելով ինչան ու գլտորին վար, իր վճիռին մէջ ի հաշիւ առնէ ելեւէջները ճանքուն ուրկէ քալելու ստիպուած է աշխարհ:

* * *

Այն երիտասարդ կինը, որ Սիպիլ կատուագրէ, իր անհատական կեանքովը պարծանքն է իր սեռին եւ իր մեծ տաղանդովը՝ մեր բոլոր գրականութեան:

Տան տիկին մըն է այս մեծ բանաստեղծուհին. եւ տան տիկին պիտի մնայ մինչեւ վերջը. կեանքի պայքարները չի պիտի դըպրն իր ճակատագրին. յորձանքները ու փորձանքները պիտի եռան, պիտի պտուտկին, պիտի անցնին իր քովիկէն առանց իրեն դաշելու. գրականութեան մէջ ինքը պիտի մընայ ճշմարիտ ներշնչեալ կինը որուն պատգամները պիտի սրտապնդեն մեզ՝ որ այնքան կարօտ ենք քաջալերութեան անոյշ ձայնին. եւ իրեն օրինակովը պիտի շարունակենք վաստակել, ապերախտ վաստակ, մինչեւ այն օրը որ Սիպիլ ապագան ցոյց տայ մեզի, յատակ եւ ջինջ հորիզոն, թողլով ներկան իր իր առօրեայ ծփանքին:

ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ



ՄՈՒՈՐԵԱԼԸ

Կին մ'եր հրմայիչ սեւ սեւ աչքերով
 Ուր մերք ցողէին կարողի գորով
 Եւ մերք ցայտին բոցեղէն փայլակ.
 Անմեղ կուսի պէս՝ հակասն էր ներմակ,
 Ծաղկունք բացուէին չմաղ ծիծաղէն.
 Իբրու թէ սերեալ պատրիկեան ցեղէն,
 Վսեմ փառածով՝ հասակաւ շրջեղ,
 Յաւերժահարսի ունէր անմահ գեղ.
 Եւ ձայնն էր դիւրիչ՝ այնքան ներդաշնակ
 Ու սիրահարաց ամբողջ մէկ բանակ
 Հոյս կառփին լծած զեհմաբաւ թանկէր.
 Մեծաք, աղամանդ, ծաղիկ, գոհարներ,
 Եւ ոսկին ծողվէր իբր աւագ ծովուն
 Զոր յետոյ տփ տփ կը ցանէր հովուն:
 Սեղանին շուրջը՝ պննեալ զեղխաբար
 Բաղխէին զինոյ զաւարներ հազար,
 Եւ որոտալով երգեր սիրագեղ
 Բագոս եւ Աստղիկ պարէին մէկեղ:
 Հոն հրապուրիչ իւր մարմնոյ պատկեր
 Արբժիռ հիւրերուն տալուն բորբոքէր.
 Եւ իւր վաճառած համբոյրք հեօտալիւ,
 Իւր լիթի կախաւ, փաղաւթանք պատիր
 Զորս դին սփռէին տւեր եւ աւար.
 Դանձեր կը լափէր եւ չէր յագեցար,
 Մտեր խողխողէր եւ սիրեն էր խաղաղ.
 Հոգի մը հզմեղ՝ այդ իւր անմեղ խաղ,
 Իւր մեծ հանդիմն էր, եւ գոգցես լուծէր
 Հինաւորց մէկ վրէժ՝ երբ տղայն եւ ծեր
 Զախկէր, բզբէր իւր փափուկ ձեռով,
 Արիւնքին քամէր՝ ծրծէր անողոք
 Իւր վաղ շրջներով . . . եւ աղանախ
 Իւր յաղթանակին՝ երկբայեցայ ես
 Թէ ինչո՞ւ սողունք շուտանք կրծեն,
 Թէ ինչո՞ւ մասաղ այդ կնոջ կրծէն
 Ժայթքէին պղտոր կրքեր կանխանաւ,
 Ինչո՞ւ գեղ նորս ըլլար պատուհաս:

* * *

Սուրբ տաճարին մէջ՝ նա սեւեր հազած
 Մոմեր վառելով՝ երթայ երկիւղած
 Անկիւն մը փռուէր եւ ծնրաղիւր անդ,
 Կամէր աղօթել խոնարհ՝ ջերմեռանդ:

Հակասք քարին դրած ընդ երկար
 Դառն յիշատակօք սիրք կուռնեմար:
 Աղջիկ մ'էր անգէտ եւ անուշահոտ
 Շաղիկ մը բաղէր երբոր վրին մօտ,
 Ոչ ոք կարկառեց ձեռք մը փրկարար,
 Եւ գործչին զինքն անդնդէն ի վար:
 Իւր սէրն առաջին անկեղծ պըրպըրար,
 Մարդիկ ծաղրելով՝ փերեցին այդ լար:
 Բարսխուն սիրք խլեցին տափ տափ,
 Յամբնեցուցին իւր ամեն սուրբ վաւիտ:
 Եւ վճէն ընկնեալ, ամօքէն պարտեալ՝
 Յուսահատելով՝ չար եղաւ ինքն ալ:
 Հիմայ իւր մեհաքս մտնինն է դազաղ
 Ուր մեռած հոգին ալ ննջէ խաղաղ:
 Ոսկի պատանեով դիակ մ'էր օրջիկ
 Եւ զինքը կոչէն անառակ աղջիկ:
 Հակասք քարին դրած ընդ երկար
 Անհուն ցաւոց մէջ հոգին էր տար,
 Եւ ա'լ չէր կարող ըմպել այդ տխուր
 Եւ լեզի բաժակ միմչեւ ցմբուր:
 Ձեր կրնար այլ եւս իւր գլուխը կրել
 Անէծքով հիւսեալ պատկն ոսկերեկ:
 Հակասք քարին դրած ընդ երկար
 Մեղայ գոչելով խեղճուկ հեծկլար:
 Եւ երբ ոտք ելաւ ու գլուխը սիրուն
 Մեղմօրէն սարսեց՝ կաշկանկեր վաշխուն
 Տոգոյն այտերէն բազկեցան զնսին,
 Եւ հաչին տալով համբոյր մը յնսին՝
 Հեռացաւ զնաց տարտամ հայլերով:
 Դեմ', բօւսա՛ւ կին, զնա՛ դէպ ի ծով
 Կակիծոյ ու մարմնոք խեղդել յալեաց խոր:
 Կամ զնա՛ ծածուկ՝ հոգիդ վիրաւոր
 Տխուր վանքին մէջ բաղել յալեան
 Բայց, ափա՛ն, ինքն էր զաւակ կորսեան,
 Կարող չէր արել իւր հակին մեռ տաւ,
 Եւ իւր հէք բաղդին գոհ եղաւ իսպառ:
 Այսպէս ասուպն ալ ի մութ գիշերի
 Դահաւիթելով վառի ու մարի,
 Եւ խորտակն այսպէս բարձ վարդի քերքեր
 Տանի աղբին մէջ նետէ անտարբեր:

29 Յուլիս 1892.

Մ. ԱՃԷՄԵԱՆ



ՄԵՐ ԿԵԱՆՔԷՆ

Բողոքական պատուելի մը : — Բյուզանդիոս Հայեր : — Հաւատարմութիւն մը մահը : — Մանուկեանի մեծակեացը կ'որհնէ՞ քէ կ'անցի՞ծէ : — . . . ցմ' : — Սփռալի : — Պարսկականի աղջիկներ : — Պաղտաւար Ալլո : — Կոստանտնուպոլսի պալատը :

Ամիս ու կէս առաջ օր մը ճանչցայ զինքը Վոսիոր ելլող շողենաւի մը մէջ : Պատուելի Մարտիրոս Շմաւոնեան ալեհեր ծերունի մըն էր . ոչ միայն ալեւոյթը այլ եւ սրբութիւն հիւանդութիւնը քայքայած աւերած էր իր առողջութիւնը . այդ դէմքին վրայ կը գտնէիր յոգնութեան, մարմնական տառապանքի արտայայտութիւն մը, որ անուշ տպաւորութիւն մը կը թողուր վրադ : Կը խօսէր հաղիւ շարժելով իր չրթունքը, հատիկ հատիկ բառեր արտասանելով, մեղմ, նուաղկոտ ձայնով մը . պարզ մարդու անպաճոյճ խօսքեր, աւելի ազդու մանաւանդ իրենց վճիտ անկեղծութեամբը :

Հարանիքի մը ներկայ գտնուելը էր նոյն օրը . Ամերիկացի հայ երիտասարդ մըն էր որ կ'ամուսնանար Տաճկաստանցի Հայուհիի մը հետ, զոր Ամերիկա պիտի տանէր Պատուելին երկիւղ յայտնեց որ այդչափ հեռուները գնացող Հայերը օր մը կորսուին իրենց ազգին համար . կ'ըսէր թէ անոնք որչափ ալ կենդանի պահեն իրենց լեզուն, այդ պիտիներու տոհմային ընազդները հետզհետէ կը տկարանան, եւ ցաւ կը զգար մտածելով թէ օր մը Ամերիկա գաղթող այդ Հայերն ալ մոռնան թերեւս իրենց բարքերը, իրենց ազգութիւնը :

Այդ տեսակցութենէն քանի մը օր ետքը այցելութեան գնացինք իրեն Մարկոս Աղաբէգեանի եւ Մեսրոպ Նուպարեանի հետ . Աղաբէգեան ճանչցած էր զինքը Խարբերդի մէջ, ուր նա գրեթէ երեսուն տարի հովուութիւն ըրած էր . հին յիշատակներ քրքրեցին երկուքն ալ : Պատուելիին դէմքը կ'ոգեւորուէր երբ կը խօսէր գաւառներու մասին . ծննդավայրին յիշատակը կը ներշնչէր զայն ու կը զգայիր թէ անուշ տխրութեամբ կը լցուէր, երբ կը մտածէր իր սիրած վայրերուն, այն հողին ու ջրին որոնց մօտ ապրած էր այնչափ տարիներ եւ որոնցմէ զատուած հեռացած էր հիմա :

Խօսեցաւ մեզ երկարօրէն քրդախօս Հայերուն վրայ, որոնց մօտ անցուցած էր իր մանկութեան մէկ մասը : Բացատրեց թէ ինչպէ՞ս իր եղբօրը, Պատուելի Ստեփան Շմաւոնեանի հետ յաջողած էր հայ տառերով քրդերէնի թարգմանել Աւետարանը, զոր տպագրել տուած էր Պոլսոյ մէջ : Ինք լաւ քուրդերէն գիտէր եւ ծանօթ էր ոչ միայն զաւա քուրդերէնին, որ պարսկերէնի կը մօտենայ, այլ եւ բարձր քուրդերէնին որ արաբական տարրեր կը պարունակէ եւ որ ամենէն աւելի խօսուածն է : Պատուելին կ'ըսէր մեզ թէ շատ քրդերէն բառեր հայերէնին հետ առնչութիւն ունին, ինչպէս շահ, շորշոր, շուշուր, որք կը նշանակեն ծախ, ծործոր, քուշ . կը յայտնէր նաեւ թէ միտք ունի պատրաստել այս մասին բաղդատական երկ մը, որուն ձեռնարկած էր արդէն :

Իր խօսքերուն մէջ կէս մը ուշադրութիւնս կը գրաւէր մանաւանդ . բողոքական քարոզիչը չէր որ կը խօսէր, այլ Հայու գաւազնը որ սրտէն կ'ողբար իր եղբայրներուն տգիտութեան վրայ, որ կը տենչար Աւետարանին լոյսը քարոզուած տեսնել իրենց լեզուն մոռցած այդ քրիստոնեայ լեռնցիներուն մէջ, հոգ չ'է թէ այս կամ այն կրօնքի պաշտօնեայնորդ քարոզէին զայն :

Քրդերէն քարոզչութեանց չնորհիւ, Պատուելին, իր եղբայրը, ինչպէս իրենց հետեւողները կրցեր էին շատ մը քրդախօս Հայերու մտաւոր զարգացման պատճառ ըլլալ . եւ սակայն այդ Հայերը, որք կը ընակին Տեարպէթիի հիւսիսային արեւելեան կողմերը, Փարքիէն մինչեւ Ռըտվան, դեռ շատ պէտք ունին կրթութեան, եւ ըզձալի է որ Ազգային Վարչութիւնը միջոցներ հայթայթէ այդ կողմերն հայ վարդապետներ ղրկելու, որպէս զի մի' գուցէ օր մը բոլոր այդ ժողովուրդը բողոքականութիւնն ընդգրկէ :

Յետոյ, խօսակցութիւնը զարձաւ կրօնքին եւ իմաստասիրութեան փոխադարձ առնչութիւններուն վրայ : Աղաբէգեան, կրօնքներու պատմութեան մասին իր ունեցած ծանօթ հմտութեամբ, պարզեց իր տեսութիւնը քրիստոնէութեան նշանակութեան մասին, անկախ՝ Եկեղեցիներու ունեցած

գերէն, եւ յայտնեց թէ անոր քարոզած ըսկզբունքներն ընդունած էին վերջին դարերու իմաստասէրներն անգամ: Կը զգայի թէ իր խօսքերը Պատուելիին հոգին բերկրանքով կը ընուն: Ինչ մեծ միտթարութիւն է հաւատացեալին՝ ուսում առած հաւատացեալներու հանդիպիլ այս ժամանակներուն մէջ, ուր դրական շունչը հետզհետէ կը վարակէ այնչափ հոգիներ:

Այս տեսակցութենէ երկու օր ետքը, ցաւով կը լսէինք թէ Պատուելին մեռեր է Բումբէի Հիսափ: Բրօֆէսօր Յակոբոս էֆէնտի ձէճիզեանի տան մէջ, եւ գիտէ՞ք որ իր խորին անկեղծ հաւատքն էր, որ դեր մը կ'ունենար իւր մահուան մէջ ալ: Բիւթանական միութեան գործադիր մարմինն հաւաքուած էր պերճախօս Բրօֆէսօրին տունը, համոզելու համար բողոքական Պատուելի մը որ Արիոսի դաւանանքը ջատագովել սկսած էր վերջերս: Մարտիրոս Շմաւոնեան ալ ներկայ էր այդ ժողովին, որուն անդամ էր: Ինք չ'էր խօսեր, ունկնդիր միայն կըլլար այն վիճաբանութիւններուն որք տեղի կունենային իր շուրջը: Սակայն միջոց մը իր քալ համբերութիւնը կը հատնի: չի հանդուրժեր որ իր մէկ պաշտօնակիցը, իր մէկ եղբայրը յանդգնի Քրիստոնէութեան էական մէկ դաւանանքին դէմ խօսիլ: ու հաւատացեալ իր հոգին կ'ապշտամբի, սիրտը կը բզձկի, կուլայ . . . : Այդ ցնցումը արեան յրջանը կը խանգարէ, հիւանդ սիրտը կը դադրի գործելէ, եւ ժամ մը ետքը Պատուելին կը մեռնի սուրբի մը պէս, անդորր խղճի մը մեղմ ու թեթեւ հոգեվարքով:

Պատուելի Շմաւոնեան բողոքական Հայոց ինքնատիպ դէմքերէն մէկն էր եւ կ'արժէր որ յիշատակին քանի մը սիւնակ նուիրէինք այս էջերուն մէջ: Ինք պատկառանքով կը խօսէր Հայաստանեայց Եկեղեցիին վրայ եւ իր ջերմ փափաքն էր որ բողոքականք չի հեռանան անկէ դաւանանքի կետերու մէջ: Առաջին տեսակցութեանս օրը հարցուցի իրեն թէ հայ բողոքականք կ'ընդունին ամուսնալուծութիւնը:

— Թէեւ արեւմտեան բողոքականները կընդունին ամուսնալուծութիւնը, պատասխանեց, բայց հայ բողոքականները պէտք է

հետեւին այս մասին Հայաստանեայց Եկեղեցիի կանոններուն:

Ձեռք կարծեր որ այս նկատմամբ բոլոր հայ բողոքական պատուելիներն համակարծիք ըլլան իրեն:

Խարբերդի քարոզիչ Պատուելին ամեն առիթէ օգուտ կը քաղէր գանգատելու համար այն օտարացումներու դէմ որոնցմով հայ բողոքականութիւնը հետըզհետէ աւելի կը հեռանար Հայաստանեայց Եկեղեցիէն: Իրեն համար «Ժողովարան» չիկար, այլ «Եկեղեցի»: Հանդիսաւոր պարագայներու մէջ, մըկրտութեան, պսակի, թաղման ժամանակ, նուիրական խօսքերը Գրաքար կ'արտասանէր: Հմուտ էր հին հայերէնին եւ հին մատենագիրները ծանօթ էին իրեն: հայերէնի դասախօս էր Քարբերդի հայ բողոքականաց վարժարանին մէջ: Գրող ալ էր եւ իր ուղեւորութեան նկարագրութիւններն հրատարակուած են երբեմն Աւետիքի մէջ: Իր գրած երգերն ալ բազմաթիւ են: անոնցմէ երեքն երգուեցան այն օրն ուր իր յիշատակին համար պաշտօն կատարուեցաւ Պայպը Հաւուսի մատուռին մէջ:

Պատուելի Շմաւոնեան ջղուտ մարդ մըն էր, նիհար, տփգոյն: Իր արթուն աչքերուն մէջ թելադրիչ բան մը կար, որ կը գրաւէ արեւէն այրած դէմքը կը մատնէր թէ հաւատարիմ իր կոչումին՝ քարոզած էր լեռնէ լեռ, ձորէ ձոր ճամբորդելով: Իր լայն ճակատը, ճերմակ երկայն մօրուքը նահապետական կերպարանք մը կուտային իրեն:

Պ. Պարնըմ, Աւետարների ծանօթ խմբագիրը, Պատուելիին վաղեմի բարեկամ, բարձր հասակ մը չ'ունենալուն պիտիանքը՝ Պատուելիին աւելի կարճ հասակը տեսնելով կը գտնէր: գէթ այսպէս ըսած էր դըպրոցական հանդէսի մը մէջ խօսելու հրաւիրելով Խարբերդի քարոզիչը, որ պատասխանած էր Սմերիկացի միտինարին զուարթաբանութեան՝ մի եւնոյն զուարթ ոճով: — Հասակիս պէս կարճ պիտի խօսիմ . . . :

Իրօք, խիստ փոքր էր հասակը, բայց որքան մեծ հոգի մը այդ նկուն պատեանին մէջ:

* * *

Լեւոն մը կողին վրայ, նկարագեղ իր

թիֆլիսի եւ խաղողի արտերով, իր պարտէզներով, իր խորդուբորդ փողոցներով, իր հին անկանոն տուններով : Ինչ որ աչքիդ կը դարնէ ամենէն առաջ երբ գիւղէն ներս կը մտնես, մանուկներու ահագին բազմութիւնն է դոր ամեն կողմ կը տեսնես, կապոյտ շաւառներ հագած, մեծ մասը բոպիկ, աղտոտ, փողոցներուն մէջ, տուններու սեմերուն վրայ, աղբիւրներու առջեւ : Ինչ բազմածին ժողովուրդ այդ Պարտիզակի Հայերը՝ եւ հիմա չեմ զարմանար երբ այնքան սանտուկներ կը տեսնեմ Պոլսոյ մէջ որ Պալէսթինէն կուգան. այդ տեղ ամեն կին կամ յոյ է կամ նոր դաւակ բերած : Կերեւայ թէ Մանուշակի մենեակեացին անէծքը կամ... օրհնէնքը — ինչպէս որ կ'ուղէք, — կ'իրականանայ Գիտէ՞ք ով է այդ մանակեացը. Յովհաննէս անունով վարդապետ մը, որ դարուս սկիզբները, Պարտիզակի մօտ, բլրի մը ստորոտը յունական հին եկեղեցիի մը աւերակներն ու աղբիւր մը երեւան հանելէ յետոյ, փորձեր է հոն հաստատել նոր ուխտ մը. այդ բլուրը կը կոչուի Մանուշակ եւ աղբիւրը Լաստիֆէր : Յովհաննէս վարդապետ բաւական տարիներ ճգներ է հոն եւ ժողովուրդն սկսեր է ուխտի երթալ Լուսաղբիւրին, ամեն կողմէ, Պարտիզակէն, Տէօնկէլէն, Արսլանպէկէն Իզմիրէն, նոյն իսկ Ատաբազարէն : Նկատելով որ ուխտաւորները կը պակսին Արմաշէն, հարկ տեսնուեր է ղրկել այդ վարդապետը Կեսարիոյ վանքը. այդ հեռացման մէջ դեր ունեցեր են շատ մը Պարտիզակցիներ, զորս անիծեր է աքսորեալը, ընդհանուր անէծք մ'ալ տալով բոլոր Պարտիզակցիներուն. Այնպէ՛ս ա՛նիծ, այնպէ՛ս ա՛նիծ որ հոգեւոր հոգ չը քննէ : Եւ Պարտիզակցիները կը բազմանան հիմա, բայց որովհետեւ ուտելու հաց կը գտնեն, կարելի է ըսել թէ վարդապետին անէծքը օրհնէնք մը եղած է գիւղին համար : Պարտիզակցի տարիքոտ կիները կը յիշեն միշտ իրենց նախկին ճգնաւորը, որուն հեռացումը կ'ողբան, պատճառ եղողները անիծելով : Հայր Սուրբին վրայ սիրուն երգ մըն ալ կ'երգեն, ուրկէ քանի մը տուն կը դնենք հոս :

Մանուշակին մէջէն մուտք մը կը մխայ
Տե՛ր Հայր Սուրբին առէն առին կը բխայ :

Խայտերուն համբոսին քարս է քարս,
Խոյօփի Հայր Սուրբին կարօս ենք կարօս :
Խայտերուն համբոսին ժելիան բուսնի,
Խոյօփի Հայր Սուրբ Մանուշակի հասնի :

Մանուկներու այս բազմութեան պատճառն անշուշտ վարդապետին օրհնէնքէն աւելի այն փութկոտութիւնն է որով աղջիկները կ'ամուսնանան Պարտիզակի մէջ : Հազուադիւրս բան մըն է տեսնել հոն տասնութ տարու աղջիկ մը որ ամուսնացած չ'ըլլայ, ճիշդ ինչպէս հազուադիւրս բան մըն է տեսնել Պոլսոյ մէջ տասնութ տարու աղջիկ մը որ ամուսնացած ըլլայ : Պարտիզակցիները շատ բարակը չ'են մրտածեր, եւ երբ ամուսնութեան տարիքը գայ, լաւ թէ գէշ, պէտք է որ իրենց աղջկան էրիկ մը գտնեն : Հոգ չ'է եթէ ամուսնութեան պահուն համոզուած ըլլան թէ իրենց աղջիկն ալ . . . ցա՛ւ է. ապա կը կոչէ ժողովուրդը (մասնաւորապէս գիւղին Աւագերէց քահանայ Տէր Կարապետ Հայրը) այն աղջիկները, որք աղքատ ամուսիններ առնլով կոչուած են օր մը սոստու ըլլալ, «հարանցու» : Մենք ցաւով լսեցինք թէ այսպիսիներն հարկւրներով կը համրուին : Իրաւ է որ գիւղացին բաւական զիւրակեաց է ընդհանրապէս, ածխագործովիւնը, շերամը, պայտագործութիւնը, տակառի տախտակներու արտադրութիւնը, Արսլանպէկի չուխայի գործարանը, ներքին առեւտուրն ու արհեստները բաւական գոհացուցիչ վիճակ մը տուած են իրենց. 200ի մօտ կիներ ալ կ'աշխատին եւ ապրուստ կը ճարեն մետաքսի երկու մանաւրաններու մէջ որոնց մին վերջերս հաստատուեր է. եւ սակայն դարձեալ շատ կիներ կը ստիպուին պանդխտի Պոլիս, Պարտիզակն ամեն տարի քանի մը հարիւր նոր դաւակներու ծնունդէն զրկելով . . . :

* * *

Մտերու փունջ մը լերան կողին վրայ, լքուած փլիւած մատուռ մը ուր Ս. Մինասի պատկերը նկարուած է խորանին մօտ՝ յունական ոճով ու պոռոտ գոյներով, աղբիւր մը որ ծորակ չ'ունի եւ որուն լայն խողովակէն պաղորակ ջուրը կը վազվզէ առանց դադարի, այս է Պարտիզակի Սեփարը :

Բայց Աստուածածնայ երկուշաբթին ուրիշ բաներ ալ պիտի գտնէք հոն . բոլոր Պարտիզակը պիտի տեսնէք իր կտրիճներով , իր աղջիկներով , հաւաքուած ծառերու շուքին տակ . ամեն կողմ խորովածի շամփուրներ , օղիի եւ գինիի ահագին չիշեր , երաժշտութիւն , երգ , պար : Անցեալ երկուշաբթի մենք ալ վայելեցինք այդ գեղջկային հանդէսը :

Հարիւրաւոր հայ աղջիկներ հոն խումբեր կազմեր էին մարզին վրայ , աղբիւրին մօտ , մանուկ շատերը , հասուկ աղջիկներ , նշանածներ ալ . ամենքը խառն ի խառն , իրենց կիրակիի արդուզարդովը , կոկիկ , մաքուր , երկներանգ չրջագեղատներով ու չփականերով , առանց սեղմակի տծեւ կուրծքերով , շատերն իրենց ճիւղին շուրջը ցոյց տալով խրոխտ ոսկիներու սիրուն շարք մը , իրենց մագեղուն կրկին հուսկերը կռնակն ի վար եւ ժապաւէն մը փոքրիկ սիրուն կապով , որ մագեղուն մէջէն ի յայտ կու գայ ինչպէս ծաղիկը տերեւախիտ թուփին վրայ . կը խօսին , կը ճռուողեն , շեշտելով , երկարելով բառերուն վերջին վանկերը , անվհեր ակնարկներ արձակելով իրենց չորս բոլորքը , անդրդուելի մնալով հետաքրքիր Պոլսեցիներու ակնարկին առջեւ :

Աւելի հեռուն , գիւղին զբօսասէրները . քով քովի նստած , հաագին զրօններ ձեւացնելով , սեփ սեւ հացի լալն շերտեր իրենց առջեւ , ձմերուկի հաստ ու խոշոր կտորներու հետ , որոնց կը միանան ճերմակ գինիի գաւաթները : Այդ խումբերէ ամենէն կարեւորին կը նախագահէ Պաղտասար Ակօ , որ նշանաւոր դարձած է իր արիութեամբ . պարթեւ հասակ մը , որ լեռնաշղթայի մը բարձրագոյն կատարին պէս կը տիրապետէ իր շուրջը գտնուողները , սէգ նայուածք մը որ կտրիճը կը մատնէ , կրակոտ աչքեր որոնց արտայայտութեանը մէջ անուշ բան մը կայ սակայն , գրաւիչ : Համեստ շալթար մը հասարակագ կտաւէ մինչեւ ծունկերը կ'երկնայ եւ բաց կը թողու ջղուտ բուսները . ճաճեպառ ու խառնիկ հսկայ իրանը կը ծածկեն . իր մէջքը կը սեղմէ լալն գօտի մը , որուն վրայ ուռուցիկ թեւերը կը հանգչին . այս է կտրիճին բոլոր արդուզարդը : Եւ սակայն կը

զգաս թէ այդ խումբին մեծաւորն է ինք , ուժին ու քաջութեան անվիճելի հեղինակութիւնը :

Իր շուրջը՝ բարեկամները կը պարեն : Աւքովը թեւեր կու տայ իրենց . իրենց ձեռքերն իրարու ուսին վրայ ձգած , ոտքերով ծնծելով հողը , երգելով , մերթ իրարու հոտեւէ վազելով եւ ծափ զարնելով , հաճոյքի գերագոյն արտայայտութիւնը իրենց դէմքին վրայ , զոր կ'ողողեն քրտինքի խոշոր կայլակներ : Գեր երիտասարդ մըն է որ կը վարէ պարերը , խարտեաշ , գեղեցիկ . գլուխը բաց , ոտքերն առանց կօշիկի , մարմինը գալարելով , ցատկաւազելով , լարախաղացի մը պէս արագաշարժ , եւ ամբողջ պարախումբն իր ետեւէն քաշքշելով :

Հրացանի եւ ատրճանակի պայթիւնները դէպի ծառերուն տերեւները կը բարձրացնեն վառօդին ծուխը : Պայթիւններուն կ'ընկերանան իրենց գոռում գոչումը , ահագին , երկարատեւ ափեր , մերթ թաւ , մերթ սուր , պրկուած ջիւղերու յանկարծական թուլացումին արդիւնք , եւ քեճեճիկն ու սրինգին ձայնը տխուր , որ դադար չ'ունի եւ որուն լալկան շեշտերը մինչեւ մեզի կը հասնին , միօրինակ ու տաղտկաբեր :

Կէս օրը քանի մը ժամ անցեր էր եւ պարերը ու երգերը կը շարունակէին միշտ :

— Ի՞նչ զարմանալի բան . գառնուկի պէս հանդարտ են այսօր , կ'ըսէր մեր մէջէն մէկը :

— Սպասեցէք , քիչ մըն ալ սպասեցէք . հիմա կոխը կը փոթի :

Ու մենք զարմացած իրարու երես կը նայէինք Զօհրապի հետ , թաքուն ներքին շարածճի փափաք մը ունենալով երկուքս ալ այդպիսի կոխի մը հանդիսատես ըլլալու , Սօխմիարի հաւաքումներուն այդ սովորական անխուսափելի կոխներէն մէկուն , որ հանդէսին գլխաւոր հրապոյրը պիտի ըլլար :

Քիչ յետոյ ներկայացումը կը սկսէր : Երիտասարդ մը պարած ատեն մէկուն սափորը կտորեր էր : Եւ ահա յիմարական խօլ պայքար մը ուր ընկերն ընկերին հետ կը ծեծկուէր , նախ զոյգ մը , յետոյ երկու , յետոյ երեք . ազատարարները կը հասնէին , կ'ուզէին բաժնել մարտիկները , եւ իրենք ալ կռուի կը բռնուէին . ամեն կողմէ տե-

ղատարափ մը կռուփներու, ոտքի հարուածներու : Հիմա ամենքն իրարու վզին փաթթուած էին, խումբ խումբ, գետինները տապալկելով, հետզհետէ գլտողերով, գահալիժելով դէպ ի վար, քակուած գետնաքարը դատնելով որք օձի պէս կը սողոսկէին այդ խառնիճաղանճին մէջ, իրենց կոկորդին խորը խեղդելով մոլեղին ոռնումներ, ու գիւիէն բորբոքած զայրոյթի բոլոր կատաղութեամբը զինելով իրենց բազուկներուն ջիղերն ու զնգերները : Մանուկները սուր ճիչեր կ'արձակէին իրենց հայրը կամ եղբայրը տեսնելով դոնուբոնին մէջ, ու կիները կը խառնուէին կռուողներուն՝ անոնց ձեռքերէն քաշելով ծառերու խոշոր ոտներ, որք կռուփներուն յաջորդեր էին հիմա խուժողով ծեծկուռք մը, հարկաւար գլուխներ որք կ'երերան, կը ծռին, կը բարձրանան, պուրակի մը ծառի ստերուն պէս որոնց մէջ փոթորիկը կը սուրայ, կ'ոլորի, պտուտկաւոր չըջաններ գծելով :

— Պաղտասար Ակօն, Պաղտասար Ակօն, կը պոռար բարեկամ մը . ո՛ւր գացեր է :

Եւ ծառերուն ետեւէն կտրիճը երեւցաւ, եկաւ խառնուիլ ինք ալ խումբին, հարուած մը հոս, հարուած մը հոն . ուրիշներ ալ արդէն կ'աշխատէին հանդարտեցնել մարտիկները. ամենէն կատաղիները պղկուեցան, հեռացուեցան . քիչ քիչ հանդարտութիւնը տիրեց եւ քանի մը վայրկեան ետքը բոլոր այդ աշխոյժ տղայքը, որ գիւրար կը բզկտէին, նորէն իրարու միացան, իրարու թեւ մտան, պարը սկսաւ, եւ պահ մը դադրած ուրախութիւնը տիրապետեց նորէն աւելի եռանդուն, աւելի եղբայրական :

ՀՐԱՆՏ ԱՍՍՏՈՒՐ

ՍԵՐ ՀՈՐԻՋՈՆԻՆ ՎՐԱՅ

— Բամառ Բաքիպա, Կովկասի Հայոց մեծագոյն բանաստեղծը, այս շաբաթ մեռաւ Վլասիկովկասի մէջ : Պէշկիպաշ շեանի եւ Դուրեանի պէս ինք ալ տապալեցաւ այն դժնդակ ախտէն որ քոֆերուն կը յարձակի : Ծերունի ֆերպոլը՝ առոյգ էր դեռ երբ հինգ տարի առաջ, գրեթէ վաթսունամեայ, Պոլիս եկաւ : Իսկիւ տարի վաղաւեռ

հայ ֆերպոլին պէս ինք ալ աղիւս մեռաւ, սակայն Կովկասի Հայերը իր վերջին օրերուն հանգիստն ապահովեցին եւ երախտագիտ տներ չը պահեցան անոնց մէջ : Կը տեսնեմ որ Ռուսահայ փոքրիկ տղաքները չ'են ըլլար միայն՝ իրենց մեծ գրագիտներուն երբ անոնք կը մեռնին, այլ հաւատարիմ հիշանդարպահներ ալ, երբ անոնք մահաբոյր ախտէ մը կը տապալին :

— Կալկաթայի Հայոց ձեմարանին Տեղեկ կը կարգուի Պ. Թորոս Ջուղայեցի, ծանօթ իր կրօնագիտական յօդուածներով : Խաչիկ Լախիկին իսթապիրը ուսուցչապետ կարգուեալ է Լաւա հայ շեքուի եւ գրականութեան : Միսիստական է տեսնել որ երբեմն կարեւոր այդ հայ գաղութին ներկայացուցիչները ջանքեր կ'ընեն պահպանելու համար իրենց Լախիստայերուն շեքուն, կրօնքը եւ աւանդութիւնները :

— Պ. Արսենակ, Թիֆլիզի հայ քաւերական խումբին զխառն դերասանը, որ անցեալ տարի Պոլիս եկաւ, եւ այնքան եռանդով կազմակերպեց հայ քաւերական նոր խումբը Թիֆլիզի մէջ, այս տարի բոլորովին յուսահատած՝ կը քողոյ հայ քեւը եւ Ռուսաստան կ'ողջեւորի : Միւս կողմէ կը շտեմ քե Պինկեւիճեան, այր եւ կիւն, եւ Օրիորդ Յեղեկեան, որք պայմանագիր կնքած էին հայ քաւերանի Մանախումբի ներկայացուցչին հետ Թիֆլիզի յառաջիկայ քաւերական եղանակին համար, կը մերժեն քողոյ Պոլիսը վախճանով . . . Կովկասի հետախօսին պատիւներէն : Տարակուսեցի է ուրեմն որ յառաջիկայ տարի հայ քաւերական ներկայացուցիչները տեղի ունենան Թիֆլիզի մէջ : Եւ սակայն մի՛ կարծեմ որ քաւերական գործը կը կաղայ հոն . դեռ հագիւ աւիս մը առաջ ազնուատեմ հայ մը, Պոլոս Բեգ Լալաեան, 500 ոսկիի մօտ գումար մը կը նուիրէ Հայոց քաւերանի «ֆոնդ»ին, ի յիշատակ իր եղբոր՝ գրաւոր Սեփա Բեգ Լալայեանի, որ ֆոլերայի զոհ զնաց Յուլիս 16ին Եւսեփի մէջ :

— Տրանսպի պէս, որ ունեցաւ իր առաջին իրաւաբանութեան Տօքթորուհին, մեմք ալ մերիկը ունեցանք իմաստասիրու-

